

ՈՎՍԷԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ՈՎՍԷԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1

ՄՏԷՐՈՋ խօսքը, որ Բէերիի որդիին՝ Ովսէէի Բուղղուեցաւ, Յուդայի թագաւորներուն՝ Ոգիայի, Յովաթամի, Աքազի ու Եգեկիայի օրերը, եւ Իսրայէլի թագաւորին՝ Յովասի որդիին Յերոբովամի օրերը։-

ՈՎՍԷԷԻ ԿԻՆՆ ՈՒ ԶԱԻԱԿՆԵՐԸ

2 Ովսէէի միջոցով ուղղուած Տէրոջ խօսքին սկիզբը։- Տէրը Ովսէէի ըսաւ. «Գնա՛, քեզի պոռնկո՛ղ կին մը ու պոռնկութեա՛ն զաւակներ առ, քանի որ երկիրը Տէրոջմէն հեռանալով՝ չափազանց պոռնկեցաւ»:

3 Ուստի գնաց ու Դաբելայիմի աղջիկը՝ Գոմերը առաւ. ան ալ յղացաւ եւ իրեն որդի մը ծնաւ: 4 Տէրը իրեն ըսաւ. «Անոր անունը Յեզրայէ՛լ կոչէ, որովհետեւ քիչ ատենէն Յեզրայէլի մէջ թափուած արիւնին համար Յէուի տունը պիտի պատժեմ, եւ Իսրայէլի տան թագաւորութիւնը պիտի դադրեցնեմ: 5 Այդ օրը Յեզրայէլի հովիտին մէջ Իսրայէլի աղեղը պիտի կտրեմ»:

6 Գոմեր դարձեալ յղացաւ եւ աղջիկ մը ծնաւ: Տէրը իրեն ըսաւ. «Անոր անունը Լօ-Րուհամա՛ կոչէ, քանի որ ա՛լ պիտի չգթամ Իսրայէլի տան, Գապա զայն բոլորովին պիտի վերցնեմ»: 7 Բայց Յուդայի տան պիտի գթամ, ու զանոնք պիտի փրկեմ Տէրոջմով՝ իրենց Աստուծմով. զանոնք աղեղով, կամ սուրով, կամ պատերազմով, ձիերով կամ ձիաւորներով պիտի չփրկեմ»:

8 Երբ Լօ-Րուհաման կաթէն կտրեց, դարձեալ յղացաւ եւ որդի մը ծնաւ: 9 Այն ատեն Տէրը ըսաւ. «Անոր անունը Լօ-Ամմի՛ կոչէ, որովհետեւ դուք իմ ժողովուրդս չէք, ու ես ձեր Աստուածը պիտի չըլլամ»:

ԻՍՐԱՅԷԼ ՊԻՏԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԻ

10 «Սակայն Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւազին պէս պիտի ըլլայ, որ չի չափուիր ու չի հաշուուիր: Այն տեղը՝ ուր անոնց ըսուեցաւ. “Դուք իմ ժողովուրդս չէք, հոն անոնք պիտի կոչուին. “Ապրող Աստուծոյ որդիները»: 11 Յուդայի որդիներն ու Իսրայէլի որդիները պիտի հաւաքուին, իրենց վրայ Գլխաւոր մը պիտի նշանակեն, ու երկրէն պիտի բարձրանան, քանի որ Յեզրայէլի օրը մեծ պիտի ըլլայ»:

Մ Երբ.՝ Եհովայի

Բ Երբ.՝ եղաւ

Գ Երբ.՝ պոռնկութեա՛ն

Դ Երբ.՝ հատուցանեմ

Ե Այսինքն՝ Գթութիւն չգտած

Զ Կամ՝ որ անոնց տակաւին ներեմ

Է Այսինքն՝ Ոչ իմ ժողովուրդս

Ը Երբ.՝ միակ գլխաւոր

ԱՆՀԱԻԱՏԱՐԻՄ ԳՈՄԵՐԸ ԵՒ ԱՆՀԱԻԱՏԱՐԻՄ ԻՍՐԱՅԷԼԸ

2

Ձեր եղբայրներուն՝ «Ամմի՛ ըսէք,
Ու ձեր քոյրերուն՝՝ Բուհամա:

2 Դա՛տ վարեցէք ձեր մօր հետ, դա՛տ վարեցէք,
Քանի որ ան իմ կինս չէ,
Ու ես անոր ամուսինը չեմ:
Ան իր երեսէն թող հեռացնէ իր պոռնկութիւնները,
Եւ իր ծիծերուն մէջէն՝ իր շնութիւնները,

3 Որ գինք հանուեցնելով չմերկացնեմ,
Իր ծնունդին օրուան պէս՝ չթողում,
Ջինք անապատի՝ չվերածեմ,
Անջրդի երկիր՝ չդարձնեմ,
Ու ծարաւով չմեռցնեմ:

4 Անոր որդիներուն պիտի չգթամ,
Քանի որ անոնք պոռնկութեան որդիներ են:

5 Արդարեւ անոնց մայրը պոռնկեցաւ,
Ջանոնք յղացողը ինքզինք՝ չխայտառակեց,
Որովհետեւ ըսաւ. «Իմ հոմանիներուս պիտի հետեւիմ,
Որոնք իմ հացս, ջուրս, բուրդս եւ վուշս,
Իւղս ու խմելիքներս կու տան **ինծի**»:

6 Հետեւաբար ահա՛ ես փուշերով պիտի փակեմ՝ իր ճամբան՝.
Ջայն պիտի ցանկապատեմ,
Որպէսզի իր շաւիղները չգտնէ:

7 Ան իր հոմանիները պիտի հետապնդէ, սակայն անոնց պիտի չհասնի.
Ջանոնք պիտի փնտռէ, բայց պիտի չգտնէ.
Ուստի պիտի ըսէ. «Երթամ եւ առաջին ամուսինիս վերադառնամ,
Քանի որ այն ատեն անելի լաւ **վիճակի** մէջ էի՝ քան հիմա»:

8 Ան գիտակցած չէր թէ՛ ե՛ս իրեն կու տայի ցորենը, քաղցուն ու իւղը.
Ե՛ս կը շատցնէի իր արծաթն ու ոսկին,
Որոնք Բահաղի ընծայեցին:

^ա Այսինքն՝ իմ ժողովուրդս

^բ Այսինքն՝ Գթութիւն գտած

^գ Եբր.՝ չդնեմ

^դ Եբր.՝ չընեմ

^ե Եբր.՝ չընեմ

^զ Եբր.՝ ամօթահար ըրաւ

^է Եբր.՝ քու ճամբադ

^ը Կամ՝ գործածեցին

- 9 Հետեւաբար պիտի վերադառնամ եւ իմ ցորենս իր ատենին **ես** պիտի առնեմ,
Ու քաղցու՝ իր եղանակին,
Եւ անոր մերկութիւնը ծածկող բուրդս ու վուշս պիտի վերստանամ:
- 10 Հիմա անոր հոմանիներուն ^բառջեւ
Իր անարգանքը պիտի յայտնեմ,
Եւ ո՛չ մէկը զինք իմ ձեռքէս պիտի ազատէ:
- 11 Անոր ամբողջ բերկրանքը,
Անոր տօները, ^գամսագլուխներն ու Շաբաթները
Եւ բոլոր հանդիսութիւնները պիտի դադրեցնեմ:
- 12 Պիտի ւաւերեմ անոր որթատունկերն ու թզենիները,
Որոնց համար կ'ըսէր. «Ասոնք հոմանիներուս ինծի տուած վարձատրութիւններն են»^դ.
Անտառի պիտի վերածեմ զանոնք,
Եւ դաշտի գազանները պիտի ուտեն զանոնք:
- 13 ^եԶայն պիտի պատժեմ՝ այն օրերուն համար՝
Որոնց մէջ ան Բահաղներուն խունկ կը ծխէր,
Իր օղերով ու մանեակներով կը զարդարուէր
Եւ իր հոմանիներուն կը հետեւէր,
Ու զիս կը մոռնար», կը պատգամէ Տէրը:

ՏԵՐՈՋ ՍԷՐԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՆԴԵՊ

- 14 «Հետեւաբար ահա՛ ե՛ս զայն պիտի հրապուրեմ,
Զայն անապատը պիտի տանիմ,
Եւ անոր լքաղցրութեամբ պիտի խօսիմ:
- 15 Անկէ պիտի տամ անոր իր այգիները,
Եւ Աքովրի հովիտը՝ իբր յոյսի դուռ.
Ու հոն պիտի ^զերգէ իր երիտասարդութեան օրերուն պէս,
Եգիպտոսի երկրէն բարձրացած օրուան պէս:
- 16 Այդ օրը, – կը պատգամէ Տէրը, –
Զիս պիտի կոչես. «Իմ ամուսի՛նս»^է,
Եւ անգա՛մ մըն ալ զիս պիտի չկոչես. «Իմ ^զԲահաղս»:
- 17 Անոր բերանէն Բահաղներու անունները պիտի ջնջեմ.
Անոնք անգա՛մ մըն ալ պիտի չյիշատակուին իրենց անուններով:
- 18 Անոնց համար այդ օրը ուխտ պիտի կնքեմ
Դաշտի գազաններուն հետ, երկինքի թռչուններուն հետ,

^բ Եբր.՝ աչքերուն

^գ Եբր.՝ նոր լուսիններն

^դ Եբր.՝ Անոր պիտի հատուցանեմ

^է Եբր.՝ սիրտին

^զ Եբր.՝ պատասխանելով երգէ

^է Այսինքն՝ տէրս

Եւ գետինի սողուններուն հետ:

Երկրէն աղեղը, սուրն ու պատերազմը պիտի ⁴վերցնեն,

Եւ զանոնք ապահովութեամբ պիտի պառկեցնեն:

19 Զեզ յաւիտենապէս ինծի պիտի նշանեն.

Զեզ արդարութեամբ, իրաւունքով,

Կարեկցութեամբ ու գթութեամբ ինծի պիտի նշանեն.

20 Այո՛, քեզ հաւատարմութեամբ ինծի պիտի նշանեն,

Եւ Տէրը պիտի ճանչնաս:

21 Այո՛ օրը,– կը պատգամէ Տէրը,– պիտի պատասխանեն,

Երկինքի **ակնկալութեան** պիտի պատասխանեն,

Ան ալ երկրի **ակնկալութեան** պիտի պատասխանէ.

22 Երկիրը ցորենով, քաղցուով ու իւղով պիտի պատասխանէ,

Եւ անոնք ⁶Յեզրայէլի **ակնկալութեան** պիտի պատասխանեն:

23 Զայն ինծի համար երկրի վրայ պիտի սերմանեն,

Ու ⁸Լօ-Բուհամայի պիտի գթամ,

Եւ ⁷Լօ-Ամմիի պիտի ըսեն. “Դուն իմ ժողովուրդս ես՝.

Ան ալ **ինծի** պիտի պատասխանէ. “Իմ Աստուածս ես՝»:

ՈՎՍԷՔԻ ԵՒ ԱՆՇԱԻԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ

3

Յետոյ Տէրը ինծի ըսաւ. «Դա՛րձեալ գնա, **իր** ⁹հոմանիէն սիրուած շնացեալ կին մը սիրէ, ինչպէս Տէրը Իսրայէլի որդիները կը սիրէ, թէեւ անոնք ուրիշ աստուածներու կը դառնան եւ չամիչով կարկանդակներ կը սիրեն»:² Ուստի զայն ինծի ¹⁰Բառի տասնհինգ **սիկղ** արծաթով ու մէկուկէս քոռ գարիով,³ եւ անոր ըսի. «Երկար ժամանակ **հաւատարի՛մ** կեցիր ինծի հանդէպ. մի՛ պոռնկիր, **ուրիշ** մարդու մի՛ ըլլար: Ե՛ս ալ **նոյնպէս** պիտի ըլլամ քեզի հանդէպ»:

⁴ Արդարեւ Իսրայէլի որդիները երկար ժամանակ պիտի մնան առանց թագաւորի, առանց իշխանաւորի, առանց զոհի, առանց արձանի, առանց ⁵Գեփուտի եւ ⁶ընտանեկան կուռքերու”:⁵ Վերջաւորութեան՝ Իսրայէլի որդիները պիտի վերադառնան ու փնտռեն Տէրը՝ իրենց Աստուածը, եւ իրենց ⁷Դաւիթ թագաւորը. վերջին օրերը վախով պիտի **դառնան** Տէրոջ ու անոր բարութեան:

⁴ Եբբ.՝ կոտորեմ

⁶ Այսինքն՝ Աստուծոյ սերմանածին

⁸ Այսինքն՝ գթութիւն չգտածին

⁷ Այսինքն՝ իմ ժողովուրդս չեղողին

⁹ Եբբ.՝ բարեկամէն

¹⁰ Եբբ.՝ գնեցի

¹¹ Հոս՝ պաշտամունքի առարկայի

¹² Եբբ.՝ թերափիմի

ՏԷՐԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ ԻՍՐԱՅԷԼԸ

4

Մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը, ո՛վ Իսրայէլի որդիներ,
Քանի որ Տէրը երկրին բնակիչներուն հետ վէճ ունի.
Արդարեւ երկրին մէջ ճշմարտութիւն չկայ, կարեկցութիւն չկայ,
Աստուծոյ ճանաչումը չկայ:

2 **՝**Երդումը, ուրացումը եւ մարդասպանութիւնը,
Գողութիւնն ու շնութիւնը շատցած են.
Թափուած արիւնները արիւններու կը ՚խառնուին:

3 Հետեւաբար երկիրը պիտի սգայ,
Եւ անոր բոլոր բնակիչները պիտի ուժաթափին
Դաշտի գազաններուն ու երկինքի թռչուններուն հետ.
Ծովուն ձուկերն ալ պիտի Գանհետանան:

ՏԷՐԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ ԶԱՀԱՆԱՆԵՐԸ

4 Սակայն ո՛չ մէկը թող վիճի, ո՛չ մէկը թող կշտամբէ,
Որովհետեւ քու ժողովուրդդ քահանային հետ վիճողներու պէս է:

5 Ուստի դուն ցերեկը պիտի գայթիս,
Ու մարգարէն ալ քեզի հետ գիշերը պիտի գայթի,
Եւ քու մայրդ պիտի բնաջնջեմ:

6 Իմ ժողովուրդս ճանաչում չունենալուն համար բնաջնջուեցաւ.
Քանի դուն ճանաչումը մերժեցիր,
Ես ալ քեզ պիտի մերժեմ, որպէսզի անգամ մըն ալ ինծի քահանայ չըլլաս:
Քանի քու Աստուծոյդ օրէնքը մոռցար,
Ես ալ քու որդիներդ պիտի մոռնամ:

7 Անոնք որչափ բազմացան,
Այնչափ ինծի դէմ մեղանչեցին.
Ուստի անոնց փառքը անարգանքի պիտի փոխեմ:

8 Անոնք իմ ժողովուրդիս **՝մեղքով կը սնանին՝**,
Եւ իրենց անձը անոր անօրէնութեան կը հանդուրժէ:

9 Ուրեմն ինչպէս ժողովուրդին՝ նոյնպէս ալ քահանային պիտի ըլլայ.
Իրենց **՝ընթացքին** համեմատ պիտի Գպատժեմ զանոնք,
Իրենց արարքներուն **փոխարէնը** պիտի հատուցանեմ անոնց:

՝ Եբր.՝ Անէծքով երդումը

բ Եբր.՝ դպչիմ

գ Եբր.՝ հաւաքուին

դ Եբր.՝ մեղքը կ'ուտեն

ե Եբր.՝ ճամբաներուն

զ Եբր.՝ հատուցանեմ

10 Պիտի ուտեն, բայց պիտի չկշտանան.
Պիտի պոռնկին, սակայն պիտի էջբարգաւաճին.
Որովհետեւ Տէրոջ ուշադիր ըլլալը թողուցին:

ՏԵՐԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

- 11 Պոռնկութիւնը, գինին ու քաղցուն
«Խելքը կը կորսնցնեն»:
- 12 Իմ ժողովուրդս իր փայտին խորհուրդ կը հարցնէ,
Եւ իր գաւազանը իրեն կ'իմացնէ.
Արդարեւ պոռնկութեան ոգին զանոնք մոլորեցուց,
Իրենց Աստուծմէն հեռանալով պոռնկեցան:
- 13 Լեռներուն գագաթը զոհ կը մատուցանեն,
Բլուրներուն վրայ խունկ կը ծխեն՝ կաղնիի, կաղամախիի ու բելեկնիի տակ,
Որովհետեւ անոնց հովանին ՞հաճելի է.
Հետեւաբար ձեր աղջիկները կը պոռնկին,
Ու ձեր հարսերը շնութիւն կ'ընեն:
- 14 Ձեր աղջիկները պիտի չպատժեմ՝ երբ պոռնկին,
Ո՛չ ալ ձեր հարսերը՝ երբ շնութիւն ընեն,
Զանի որ հայրերը իրե՛նք պոռնիկներուն հետ կը մեկուսանան,
Ու ճրգերուն հետ կը զոհեն.
Ուստի անխելք ժողովուրդը պիտի տապալի:
- 15 Թէպէտ դուն կը պոռնկիս, ո՛վ Իսրայէլ,
Գոնէ Յուդա թող յանցաւոր չըլլայ.
Գաղգաղա մի՛ մտնէք, Բեթաւան մի՛ բարձրանաք,
Ու երդում մի՛ ընէք՝ ըսելով. «Տէրը կ'ապրի»:
- 16 Արդարեւ Իսրայէլ ստամբակ երինջի պէս ապստամբեր է.
Հիմա Տէրը ՚պիտի արածէ՞՞ զանոնք ընդարձակ տեղ մը՝ գառներու պէս:
- 17 Եփրեմ կուռքերու յարած է.
Չգէ՛ գինը:
- 18 Անոնց գինարբուքը ՚ապականած է.
Պոռնկութեան անձնատուր կ'ըլլան.
Անարգա՛նք անոնց ՚իշխանաւորներուն,

է Կամ՝ չշատնան

բ Եբբ.՝ Սիրտը կ'առնեն

բ Եբբ.՝ լաւ

ժ Եբբ.՝ վերապահուած կիներուն (այսինքն՝ կռապաշտական պոռնկութեան վերապահուած)

ի Կամ՝ միթէ պիտի արածէ՞

լ Եբբ.՝ այլասերած

լս Եբբ.՝ վահաններուն

Որոնք կը սիրենք **ըսել**. «Տուէ՛ք»:

19 Հոպը զիցք իր թելերուն վրայ պիտի փաթթէ,
եւ անոնք իրենց զոհերուն համար պիտի ամչնան:

5

Լսեցէ՛ք ասիկա, ո՛վ քահանաներ.
Ուշադի՛ր եղէք, ո՛վ Իսրայէլի տունը.
Ունկնդրեցէ՛ք, ո՛վ թագաւորին տունը:
Արդարեւ ձեզի դէմ դատաւճիռ կայ,
Որովհետեւ դուք վարմ եղաք Մասփայի մէջ,
Ու տարածուած ցանց՝ Թաբորի վրայ:

2 Մոլորածները **«զոհեր մորթելով մեղքի մէջ խորասուզուեցան»**,
«Թէպէտ ես անոնց բոլորին խրատ կու տայի»:

3 Ես Եփրեմը կը ճանչնամ,
եւ Իսրայէլ ինձմէ ծածկուած չէ.
Արդարեւ հիմա, ո՛վ Եփրեմ, դուն կը պոռնկիս,
Իսրայէլ **«ապականած է**:

ՈՎՍԷՒ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ԿՈԱՊԱՇՏՈՒԹԵՆԷ

- 4** Անոնց արարքները իրենց չեն թոյլատրեր
Որ իրենց Աստուծոյն վերադառնան,
Զանի որ անոնց մէջ պոռնկութեան ոգի կայ
եւ Տէրը չեն ճանչնար:
- 5** Իսրայէլի ամբարտաւանութիւնը իր երեսին դէմ կը վկայէ.
Իսրայէլ ու Եփրեմ իրենց անօրէնութեամբ պիտի գայթին,
Յուդա ալ անոնց հետ պիտի գայթի:
- 6** Անոնք իրենց ոչխարներով եւ արջառներով
Տէրը փնտռելու պիտի երթան, բայց պիտի չգտնեն.
Ինք անոնցմէ **«հեռացաւ**:
- 7** Անոնք Տէրոջ անհաւատարիմ եղան,
Որովհետեւ **«ապօրինի զաւակներ»** ծնան.
Հիմա **«մէկ ամսուան մէջ պիտի սպառին»**
Իրենց **ժառանգութեան** բաժիններով:

^u **Կամ՝** խորունկ փոս մը փորեցին

^p **Կամ՝** Ուստի ես անոնց բոլորին պատիժ **պիտի տամ**

^q **Եբբ.**՝ անմաքուր եղած

^r **Եբբ.**՝ ազատեցաւ

^t **Եբբ.**՝ օտար որդիներ

^e **Եբբ.**՝ մէկ ամիսը զանոնք պիտի սպառէ

- 8 Գաբաայի մէջ շեփո՛ր հնչեցուցէք,
Եւ Ռամայի մէջ՝ փող.
Բեթաւանի մէջ՝ ^էգոչեցէ՛ք,
Զու ետեւէդ, ո՛վ Բենիամին:
- 9 Կշտամբանքի օրը Եփրեմ ամայի պիտի ըլլայ.
Իսրայէլի տոհմերուն մէջ ^բստոյգը կը գիտցնեմ:
- 10 Յուդայի իշխանաւորները սահմանաքար տեղափոխողներու պէս եղան.
Անոնց վրայ իմ ցասումս ջուրի պէս պիտի թափեմ:
- 11 Եփրեմ հարստահարուած ու դատավճիռով ջախջախուած է,
Զանի որ կամապաշտութեամբ ^բունայնութեան հետեւեցաւ:
- 12 Ուստի ես ցեցի պէս պիտի ըլլամ Եփրեմի,
Եւ փտութեան պէս՝ Յուդայի տան:
- 13 Երբ Եփրեմ իր հիւանդութիւնը տեսաւ, ու Յուդա՝ իր վէրքը,
Եփրեմ Ասորեստան գնաց,
Եւ ^ժՅարեբ թագաւորին **պատգամաւորներ** ղրկեց.
Բայց ան չի կրնար ձեզ բուժել ու ձեր վէրքը առողջացնել:
- 14 Արդարեւ ես իմոնչող **առիւծի**՝ պէս պիտի ըլլամ Եփրեմի,
Եւ **առիւծի** կորիւնի պէս՝ Յուդայի տան.
Ե՛ս, ե՛ս պիտի բզքտեմ, ու պիտի երթամ.
Պիտի տանիմ, եւ ո՛չ մէկ ազատող պիտի ըլլայ:
- 15 Ես պիտի երթամ, իմ տեղս պիտի վերադառնամ,
Մինչեւ որ անոնք իրենց յանցաւոր ըլլալը խոստովանին ու երեսս խնդրեն:
Իրենց տագնապին մէջ ՚փութեմով զիս պիտի փնտռեն **եւ ըսեն**.

ԺՈՂՎՈՒՐԴԻՆ ԿԵՐԾ ԶՂՋՈՒՄԸ

6

- «Եկէ՛ք, Տէրո՛ջ վերադառնանք,
Զանի որ ի՛նք բզքտեց, եւ ի՛նք մեզ պիտի բուժէ.
Ի՛նք գարկաւ, եւ ի՛նք մեր **վէրքերը** պիտի փաթթէ:
- 2 Երկու օրէն մեզ պիտի վերապրեցնէ,
Երրորդ օրը մեզ պիտի կանգնեցնէ,
Եւ անոր առջեւ պիտի ապրինք:
- 3 Տէրը պիտի ճանչնանք, **ու զայն** ճանչնալու հետամուտ պիտի ըլլանք.

- ^է Կամ՝ գոռացուցէ՛ք
- ^բ Եբր.՝ ճշմարիտը
- ^բ Եբր.՝ մարդկային պատուէրի
- ^ժ Կամ՝ մեծ
- ^ի Կամ՝ վագրի
- ^լ Եբր.՝ արշալոյսին

Անոր ելքը արշալոյսի պէս «որոշ է.
Ան մեզի պիտի գայ տեղատարափի պէս,
Երկիրը թրջող^բ վերջին անձրեւին^ա պէս»:

- 4 Զեզի ի՞նչ ընեմ, ո՛վ Եփրեմ,
Զեզի ի՞նչ ընեմ, ո՛վ Յուդա.
Որովհետեւ ձեր բարեպաշտութիւնը առտուան ամպին պէս է,
Կանուխ իջած^գ ցողին պէս՝ որ «կ'անհետանայ»:
- 5 Հետեւաբար մարգարէներուն ձեռքով զանոնք կոփեցի,
Բերանիս խօսքերով զանոնք մեռցուցի,
Որպէսզի ՚իմ դատավճիռներս՝ լոյսի պէս^ե ծագին:
- 6 Արդարեւ ես կարեկցութենէ կ'ախորժիմ, եւ ո՛չ թէ զոհէ,
Ու ողջակէզներէն աւելի՝ Աստուծոյ ճանաչումէն:
- 7 Իսկ անոնք «Ադամի պէս ուխտը անտեսեցին,
Ինծի անհաւատարիմ եղան:
- 8 Գաղաադ անօրէնութիւն գործողներու քաղաք է,
Արիւնի հետքերով լեցուն է:
- 9 Ինչպէս անազակներու գունդերը
Մարդու համար «դարանակալ կ'ըլլան»,
Նոյնպէս քահանաներուն թխումքը
Սիւքէմի ճամբային մէջ կը սպաննէ,
Որովհետեւ լրբութիւն կը գործէ:
- 10 Իսրայէլի տան մէջ քստմնելի բաներ տեսայ.
Եփրեմի պռռնկութիւնները հո՛ն են,
Իսրայէլ թապականեցաւ:
- 11 Զեզի՛ ալ հունձք մը՝ պատրաստուած է, ո՛վ Յուդա,
Երբ իմ ժողովուրդս գերութենէն վերադարձնեմ:

7

^ա Եբր.՝ հաստատ

^բ Եբր.՝ վերջին անձրեւին եւ առաջին անձրեւին

^գ Եբր.՝ կ'երթայ

^դ Կամ՝ քու դատավճիռներդ

^ե Եբր.՝ դուրս ելլեն

^զ Կամ՝ ուրիշ մարդոց

^է Եբր.՝ կը սպասեն

^ը Եբր.՝ ընկերակցութիւնը

^թ Եբր.՝ անմաքուր եղաւ

^ժ Եբր.՝ դրուած

ՈՎՍԷՏԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Երբ Իսրայելը պիտի բուժէի,
Եփրեմի անօրէնութիւնը
Եւ Սամարիայի չարութիւնները յայտնուեցան:
Արդարեւ անոնք կեղծիքով կը վարուին.
Գողը **տուներէն** ներս կը մտնէ,
Իսկ դուրսը **աւազակներու** գունդը կը կողոպտէ:

2 Անոնք ^բ չեն մտածեր՝

Թէ ես իրենց ամբողջ չարութիւնը կը յիշեմ.
Հիմա անոնց արարքները զիրենք կը շրջապատեն,
Անոնք իմ ^գ առջեւ են:

ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ

3 Իրենց չարութեամբ թագաւորը կ'ուրախացնեն,
Եւ իրենց խարդախութիւններով՝ իշխանաւորները:

4 Բոլորն ալ շնացողներ են՝

Հացագործէն վառուած փուռի պէս.

Ան կրակը արծարծելէն կը դադրի՝

Խմորի զանգուածը շաղելէն ետք, մինչեւ որ ան խմորուի:

5 Մեր թագաւորին **տարեդարձի** օրը,

Իշխանաւորները գինիին ^ն խանդավառութենէն ^ե հիւանդացան.

Ան իր ձեռքը ծաղրողներուն երկարեց:

6 Արդարեւ՝ դարան մտած ըլլալով՝

Անոնք իրենց սիրտը փուռի պէս ^գ պատրաստեցին.

Անոնց ^ե հացագործը ամբողջ գիշերը կը քնանայ,

Առտուն **փուռը** կրակի բոցի պէս կը վառի:

7 Բոլորն ալ փուռի պէս տաքցան,

Եւ իրենց դատաւորները սպառեցին.

Անոնց բոլոր թագաւորները տապալեցան.

Անոնցմէ ^ո չ մէկը ինծի կը գոչէ:

ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐ ԴՆԵՐԸ

8 Եփրեմ ժողովուրդներուն հետ ^բ խառնուեցաւ.

^ա Եբբ.՝ մերկացնէ

^բ Եբբ.՝ իրենց սիրտին մէջ չեն ըսեր

^գ Եբբ.՝ երեսիս դիմաց

^դ Եբբ.՝ տաքութենէն

^ե Կամ՝ գայն հիւանդացուցից

^զ Եբբ.՝ մօտեցուցից

^է Կամ՝ բարկութիւնը

Եփրեմ չդարձուած շօթի պէս է:

- 9 Օտարները անոր ոյժը սպառեցին, իսկ ինք չի գիտեր.
Նոյնիսկ ճերմակ մազեր թուսած են գլուխին վրայ², բայց ինք չի գիտակցիր:
- 10 Իսրայէլի ամբարտաւանութիւնը իր երեսին դէմ կը վկայէ,
Սակայն անոնք չեն վերադառնար Տէրոջ՝ իրենց Աստուծոյն,
Զայն չեն փնտռեր՝ հակառակ այս բոլորին:
- 11 Նաեւ Եփրեմ միամիտ եւ ^ժանխելք աղաւնիի պէս եղաւ.
Եգիպտոսը **օգնութեան** կը կանչեն, Ասորեստան կ'երթան:
- 12 Երբ անոնք երթան, անոնց վրայ իմ ցանցս պիտի տարածեմ.
Զանոնք պիտի իջեցնեմ՝ երկինքի թռչուններուն պէս.
Զանոնք պիտի պատժեմ, ինչպէս իրենց համայնքը ^Իազդարարուեր է:
- 13 Վա՛յ անոնց, որովհետեւ ինձմէ փախան.
Կործանո՛ւմ պիտի հասնի անոնց վրայ, որովհետեւ ինձի դէմ յանցանք գործեցին:
Թէեւ ես զանոնք փրկեցի,
Իրենք ինձի դէմ սուտ խօսեցան:
- 14 Երբ իրենց անկողիներն վրայ կը գոռային,
Իրենց սիրտով ինձի չաղաղակեցին:
Անոնք ցորենի ու քաղցուի համար կը զինակցին,
Սակայն ինձմէ կը հեռանան:
- 15 Թէպէտ **զանոնք** խրատեցի
Եւ անոնց բազուկները ուժովցուցի,
Իրենք չարիք կը 'նիւթեն ինձի դէմ:
- 16 Անոնք կը վերադառնան, բայց, ո՛չ Ամենաբարձրին.
Խաբեբայ աղեղի պէս են:
Անոնց իշխանաւորները իրենց լեզուին անպատկառութեան համար սուրով պիտի
իյնան.
Ասիկա զանոնք ծաղրանքի **առարկայ** պիտի ընէ Եգիպտոսի երկրին մէջ:

ՏԵՐԸ ԿԸ ՅԱՆԴԻՄԱՆԷ ԻՍՐԱՅԷԼԸ՝ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

8

Շեփորը **բերա՛նդ դիր.**
Թշնամին կը խոյանայ Տէրոջ տան վրայ՝ արծիւի պէս,
Զանի որ իմ ուխտս անտեսեցին
Եւ իմ օրէնքիս դէմ յանցանք գործեցին:

2 Իսրայէլ ինձի կ'աղաղակէ.

² Եբբ.՝ ինքզինք շաղեց

^թ Եբբ.՝ ցանուած են իր վրայ

^ժ Եբբ.՝ անսիրտ

^Ի Եբբ.՝ լսեր

^Լ Եբբ.՝ հնարեն

^ա Եբբ.՝ քիմքդ

«Իմ Աստուածս, մենք քեզ կը ճանչնա՛նք»:

- 3 Իսրայէլ բարին մերժեց.
Թշնամին զինք պիտի հետապնդէ:
- 4 Անոնք թագաւորներ նշանակեցին, բայց ինձմով չէր.
Իշխանաւորներ նշանակեցին, սակայն **զանոնք** չէի ճանչնար:
Իրենց արծաթով ու ոսկիով իրենց կուռքեր կերտեցին,
Որպէսզի բնաջնջուին:
- 5 Զու հորթդ մերժուեցաւ, ո՛վ Սամարիա.
Իմ բարկութիւնս անոնց դէմ բորբոքեցաւ.
Մինչեւ ե՞րբ պիտի չկարենան անմեղ ըլլալ:
- 6 Արդարեւ ասիկա ալ Իսրայէլէն է.
Արհեստաւորը կերտեց զայն, ուրեմն Աստուած չէ.
Հետեւաբար Սամարիայի հորթը կտոր-կտոր պիտի ըլլայ:
- 7 Զանի հով սերմանեցին, փոթորիկ պիտի հնձեն.
Ան հասուն ցորեն չունի.
Եթէ բուսնի՝ ալիւր պիտի չտայ.
Ու եթէ տայ՝ օտարները պիտի ուտեն զայն:
- 8 Իսրայէլ կլլուեցաւ.
Հիմա ազգերուն մէջ անբաղձալի իրի պէս պիտի ըլլան:
- 9 Արդարեւ անոնք առանձնակեաց վայրենի իշու պէս Ասորեստան գացին.
Եփրեմ հոմանիներ պարգեւատրեց:
- 10 Թէպէտ իրենք ազգերը պարգեւատրեցին, ես հիմա զանոնք պիտի հաւաքեմ.
Իշխանաւորներու թագաւորին բռնէն պիտի սկսին քիչ մը **հանգստանալ**.
- 11 Արդարեւ Եփրեմ բագինները բազմապատկեց՝ մեղանչելու համար,
Եւ այդ բագինները իրեն համար մեղանչելու **պատճառ** եղան:
- 12 Իմ օրէնքիս բիրաւոր **կանոնները** գրեցի անոր,
Սակայն օտար **բանի** պէս սեպուեցան:
- 13 Իմ ընծաներուս զոհերուն համար՝
Անոնք միս կը զոհեն, ու **զայն** կ'ուտեն,
Բայց Տէրը անոնց չի հաւանիր:
Հիմա իրենց անօրէնութիւնը պիտի յիշէ
Եւ իրենց մեղքերը պիտի հատուցանէ.
Անոնք Եգիպտոս պիտի վերադառնան:
- 14 Արդարեւ Իսրայէլ իր Արարիչը մոռցաւ, ու ⁴մեհեաններ կառուցանեց.
Յուդա պարսպապատ քաղաքները շատցուց,
Բայց ես անոր քաղաքներուն վրայ կրակ պիտի թափեմ,
Եւ անոր պալատները պիտի սպառէ:

ՈՎՍԷՏ Կ'ԻՄԱՅՆԷ ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏԻԺԸ

9

Մի՛ խայտար **եւ** մի՛ ուրախանար ժողովուրդներուն պէս, ո՛վ Իսրայէլ,
Զանի որ քու Աստուծմէդ **հեռանալով** պոռնկեցար:

⁴ Կամ՝ տառապիլ

⁴ Կամ՝ պալատներ

Ամէն ցորենի կալի վրայ պոռնկութեան վարձատրութիւնը սիրեցիր:

- 2 Կալն ու հնձանը զանոնք պիտի չսնուցանեն,
Եւ քաղցուն ^ահոն պիտի ^բխաբէ:
- 3 Անոնք Տէրոջ երկրին մէջ պիտի չբնակին,
Հապա Եփրեմ Եգիպտոս պիտի վերադառնայ,
Ու Ասորեստանի մէջ անմաքուր բաներ պիտի ուտեն:
- 4 Տէրոջ ^գգինիի նուէր պիտի չընծայեն[՝],
Իրեն հաճելի պիտի չըլլան անոնք.
Անոնց զոհերը սգաւորներու հացին պէս պիտի ըլլան իրենց,
Բոլոր զայն ուտողները պիտի պղծուին.
Արդարեւ անոնց հացը իրենց անձերուն համար է,
Տէրոջ ^դտունը պիտի չմտնէ:
- 5 Ի՞նչ պիտի ընէք հանդիսութեան օրը,
Տէրոջ տօնին օրը:
- 6 Արդարեւ ահա՛ կործանումէն **փախչելով** կ'երթան.
Եգիպտոս զանոնք պիտի հաւաքէ,
Մեմփիս զանոնք պիտի թաղէ:
^եԵկբանը պիտի տիրանայ անոնց արծաթէ ցանկալի առարկաներուն.
^զՄոշենիներ **պիտի բուսնին** անոնց վրաններուն մէջ:
- 7 ^էՊատիժի օրերը հասան,
Հատուցումի օրերը հասան,
Իսրայէլ պիտի գիտնայ:
Քու անօրէնութեանդ շատութեան
Եւ քու մեծ ^ըընդդիմութեանդ համար՝
Մարգարէն յիմար եղաւ, ու ^թներշնչուած մարդը՝ խելագար:
- 8 Եփրեմի դէտը իմ Աստուծոյս քով է.
Մարգարէն իր բոլոր ճամբաներուն վրայ թռչնորսի վարմ է.
Իր Աստուծոյն տան մէջ ընդդիմութեան **պատճառ** կ'ըլլայ:
- 9 Գաբաայի օրերուն պէս ^զչափազանց ապականեցան.

^ա Եբր.՝ անոր մէջ

^բ Եբր.՝ խարդախէ

^գ Եբր.՝ գինի պիտի չթափեն

^դ Այսինքն՝ տաճարը

^ե Փշոտ թուփ մը

^զ Փշոտ թուփ մը

^է Եբր.՝ Այցելութեան, կամ՝ Հատուցումի

^ը Եբր.՝ ատելութեանդ

^թ Եբր.՝ հոգիի

^զ Եբր.՝ խորապէս

ՈՎՍԷԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,
Անոնց մեղքերը պիտի հատուցանէ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵՂԵԸ ԵՒ ԱՆՈՐ ՆԵՏԵՒԱՆԸ

- 10 Իսրայէլը գտայ՝ անապատի մէջ եղող խաղողի պէս,
Ձեր հայրերը տեսայ՝ թզենիին կանխահաս – առաջին – պտուղին պէս,
Սակայն անոնք Բահաղ-Փէոփր գացին,
Իրենք զիրենք **այդ** ամօթալի **կուռքին**՝ հնուիրաբերեցին,
Եւ իրենց սիրածին պէս իրենք **ալ** պիղծ եղան:
- 11 Ինչ կը վերաբերի Եփրեմի, անոնց փառքը
Թռչունի պէս պիտի թռչի,
Ծնունդէն, Վարգանդէն ու յղութենէն ի վեր:
- 12 Թէեւ իրենց որդիները մեծցնեն,
Ջանոնք պիտի յափշտակեմ մինչեւ որ ո՛չ մէկը **մնայ**.
Նաեւ վա՛յ անոնց, երբ անոնցմէ հեռանամ:
- 13 Եփրեմ **ալ**, ինչպէս Տիրոսը տեսայ, ^Խհաճելի **վայր** մը տնկուած էր.
Բայց Եփրեմ իր որդիները դուրս պիտի հանէ՝ ջարդուելու:
- 14 Տո՛ւր անոնց, ո՛վ Տէր. ի՞նչ պիտի տաս.
Վիժո՛ղ արգանդ եւ չո՛ր ծիծեր տուր անոնց:

ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

- 15 Անոնց ամբողջ չարութիւնը Գաղգաղայի մէջ է.
Արդարեւ հոն զանոնք աստեցի:
Անոնց չար արարքներուն պատճառով
Ջանոնք իմ տունէս պիտի վռնտեմ.
Ջանոնք անգա՛մ մըն ալ պիտի չսիրեմ:
Անոնց բոլոր իշխանաւորները ապստամբներ են:
- 16 Եփրեմ զարնուեցաւ.
Անոնց արմատը չորցաւ, պտուղ պիտի չտան:
Նոյնիսկ եթէ անոնք ծնանին,
Անոնց արգանդին ցանկալի **պտուղը** պիտի մեռցնեմ:
- 17 Իմ Աստուածս զանոնք պիտի մերժէ,
Քանի որ իրեն մտիկ չըրին.
Ուստի ազգերուն մէջ թափառական պիտի ըլլան:

ՄԱՐԳԱՐԷՆ ԿԸ ԽՕՍԻ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԱՍԻՆ

10

Իսրայէլ բազմաճիւղ որթատունկ մըն է,

^Ի Եբր.՝ անջատեցին

^Լ Եբր.՝ փորէն

^Խ Եբր.՝ վայելուչ

Իրեն ^ահամեմատ պտուղ կը բերէ.

Իր պտուղին առատութեան չափ բազինները բազմապատկեց,
Իր երկրին ^բգեղեցկութեան համեմատ արծանները ^գգեղեցկացուց:

2 Անոնց սիրտը ^դփոփոխական է. հիմա յանցաւոր պիտի սեպուին:

^եՏէրը անոնց բազինները պիտի փլցնէ,
Անոնց արծանները պիտի կործանէ:

3 Արդարեւ հիմա պիտի ըսեն.

«Մենք թագաւոր չունինք,
Զանի որ Տէրոջմէն չվախցանք.

Թագաւորը մեզի ^զհոնչ պիտի կարենայ ընել»:

4 Խօսքեր կ'արտասանեն, երբ ուխտ կնքեն՝ սուտ ^զերդում կ'ընեն.

Ուստի դատավճիռը թունաւոր **խտի պէս** պիտի բուսնի արտին ակօսներուն մէջ:

5 Սամարիայի բնակիչները Բեթաւանի հորթերուն համար պիտի վախնան.

Արդարեւ անոր ժողովուրդը ^էկուռքին վրայ պիտի սգայ,
Եւ անոր քուրմերը անոր փառքին համար պիտի ^ըդողան,
Զանի որ ան իր քովէն փոխադրուեցաւ:

6 Ան ալ Ասորեստան պիտի տարուի՝

Իբր ընծայ ^բՅարեբ թագաւորին:
Եփրեմ ամօթ պիտի ^զզգայ,
Եւ Իսրայէլ իր ծրագիրէն պիտի ամչնայ:

7 ^իՍամարիա իր թագաւորով՝ պիտի բնաջնջուի

Ջուրի մակերեսին վրայ եղող փրփուրի պէս:

8 Աւէնի բարձր տեղերը – Իսրայէլի մեղքը – պիտի կործանին.

Անոնց բազիններուն վրայ փուշ ու տատասկ պիտի ^լբուսնի.
Լեռներուն պիտի ըսեն. «Ծածկեցէ՛ք մեզ»,

^ա Կամ՝ համար

^բ Եբր.՝ վայելչութեան

^գ Եբր.՝ վայելչագեղ ըրին

^դ Եբր.՝ բաժնուած

^ե Եբր.՝ ինք

^զ Եբր.՝ անէծքով երդում

^է Եբր.՝ անոր

^ը Կամ՝ խայտան

^բ Կամ՝ Մեծ

^զ Եբր.՝ ստանայ

^ի Կամ՝ Սամարիայի թագաւորը

^լ Եբր.՝ ելլէ

Եւ բլուրներուն. «Ինկէ՞ք մեր վրայ»:

ԱՍՏՈՒԱԾ Կ'ԻՄԱՅՆԷ ԻՍՐԱՅԷԼԻ ՎՃԻՌԸ

- 9 Գաբաայի օրերէն ի վեր մեղանչեցիր, ո՛վ Իսրայէլ.
Անոնք հոն կեցան,
Գաբաայի մէջ չարութեան որդիներուն դէմ եղած պատերազմը անոնց չհասաւ:
- 10 Զանոնք փափաքիս համաձայն պիտի պատժեմ.
Ժողովուրդները անոնց դէմ պիտի հաւաքուին,
Զանի իրենց երկու ^Խանօրէնութիւններուն կը կապուին:
- 11 Եփրեմ վարժուած երինջ մըն էր՝ որ կը սիրէր կամնել,
Բայց ես անոր վայելչագեղ վիզին վրայ **լուծ մը** անցուցի.
Եփրեմը **արօրի** պիտի լծեմ,
Յուդա պիտի հերկէ,
Յակոբ անոր **ետեւէն** պիտի տափանէ:
- 12 Արդարութեամբ սերմանեցէք ձեզի,
Եւ կարեկցութեամբ հնձեցէք.
Մշակեցէ՞ք ձեր խոպան **հողերը**,
Զանի ատենն է Տէրը փնտռելու,
Մինչեւ որ գայ ու ձեր վրայ արդարութիւն ^Ծտեղացնէ:
- 13 Ամբարշտութիւն ^Կցանեցիք եւ անիրաւութիւն հնձեցիք.
Խարդախութեան պտուղը կերաք,
Զանի որ դուն ^Ճամբայիդ ^Ճապաւինեցար, քու գօրաւորներուդ շատութեան:
- 14 Ուստի քու ժողովուրդիդ մէջ ժխոր պիտի բարձրանայ,
Եւ բոլոր ամրոցներդ պիտի կործանին,
Ինչպէս Սաղման Բեթարբէլը կործանեց պատերազմին օրը,
Երբ մայրը իր որդիներուն վրայ գետին գարնուեցաւ:
- 15 Բեթէլ նոյնպէս պիտի ընէ ձեզի՝
Չեր չափազանց չարութեան ^Ղպատճառով.
Արշալոյսին՝ Իսրայէլի թագաւորը **բոլորովին** պիտի բնաջնջուի:

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ԱՊՍՏԱՄԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՆԴԷՊ

11

«Երբ Իսրայէլ ^Մմանուկ էր, գինք կը սիրէի,

^Խ Կամ՝ ակօսներուն

^Ծ Երբ.՝ արձակէ

^Կ Երբ.՝ հերկեցիք

^Ճ Այսինքն՝ ընթացքիդ

^Ճ Երբ.՝ վստահեցար

^Ղ Երբ.՝ երեսէն

^Մ Երբ.՝ տղայ

- Եւ իմ որդիս Եգիպտոսէն կանչեցի:
- 2 Զիրենք կը կանչէին, սակայն իրենք անոնցմէ ^բկը հեռանային՝.
Բահաղներո՛ւն զոհ կը մատուցանէին
Ու ^գկուռքերո՛ւն խունկ կը ծխէին:
- 3 Ե՛ս ^դԵփրեմի քալել սորվեցուցի՝.
Զանոնք ^եիրենց բազուկներէն՝ կը բռնէի,
Սակայն չգիտցան թէ ե՛ս զիրենք կը բուժէի:
- 4 Զանոնք մարդու լարերով, սիրոյ ^զկապերով քաշեցի,
Եւ անոնց ^էվիզէն լուծը հանողներու պէս եղայ իրենց.
Անոնց **քաղցրութեամբ** կերցուցի:
- 5 Ան Եգիպտոսի երկիրը պիտի չվերադառնայ,
Հապա Ասորեստանցին պիտի ըլլայ իր թագաւորը,
Զանի որ մերժեցին **ինձի** վերադառնալ:
- 6 Սուրը պիտի յարձակի անոնց քաղաքներուն վրայ,
Անոնց նեցուկները պիտի ^ըանհետացնէ եւ սպառէ՝
Իրենց ծրագիրներուն պատճառով:
- 7 Իմ ժողովուրդս ինձի հանդէպ ուխտադրուծ ըլլալու հակամէտ է:
Թէպէտ զիրենք Ամենաբարձրին կը կանչեն,
Երբեք մէկը **զայն** չի բարձրացներ:
- 8 Զեզ ^աի՞նչպէս մատնեմ, ո՛վ Եփրեմ.
Զեզ **ի՞նչպէս** յանձնեմ, ո՛վ Իսրայէլ.
Զեզ ^բի՞նչպէս Ադմայի նման դարձնեմ,
Զեզ **ի՞նչպէս** Սեբոյիմի նման ընեմ:
Իմ սիրտս տակնուվրայ է ներսս,
Նոյն ատեն արգահատանքներս բռնկած են:
- 9 Իմ ^գբորբոքած բարկութիւնս՝ պիտի չկիրարկեմ,
Եփրեմը դարձեալ պիտի չկործանեմ:
Արդարեւ ես Աստուած եմ, եւ ո՛չ թէ մարդ.
Զու մէջդ եղող Սուրբն **եմ**.
^դԲարկութեամբ պիտի չգամ՝:

^բ Եբբ.՝ կ'երթային

^գ Եբբ.՝ քանդակուած պատկերներո՛ւն

^դ Եբբ.՝ Եփրեմը քալեցուցի

^ե Կամ՝ բազուկներովս

^զ Եբբ.՝ փոկերով

^է Եբբ.՝ ծնօտէն

^ը Եբբ.՝ հատցնէ

^զ Եբբ.՝ բարկութեանս բորբոքումը

^դ Կամ՝ Զաղաքը չեմ մտներ

- 10 Տէրոջ պիտի հետեւին,
Ան առիւծի պէս պիտի մռնչէ.
Երբ ան մռնչէ,
Որդիները ^hարեւմուտքէն պիտի ^lարտորան:
- 11 Անոնք Եգիպտոսէն պիտի արտորան՝ ճնճղուկի պէս,
Եւ Ասորեստանի երկրէն՝ աղաւնիի պէս.
Ջանոնք իրենց տուներուն մէջ պիտի բնակեցնեն», կը պատգամէ Տէրը:

ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ՅՈՒՂԱ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

12

- Եփրեմ գիս կը շրջապատէ խարդախութեամբ,
Եւ Իսրայէլի տունը՝ խաբէութեամբ.
Բայց Յուդա տակաւին Աստուծով կը տիրապետէ,
Ու սուրբերուն մէջ հաւատարիմ է:
- 2 Եփրեմ հով կը ճարակէ, եւ արեւելեան հովը կը հետապնդէ.
Ամէն օր ստութիւնն ու գրկանքը կը բազմապատկէ.
Ուխտ կը կնքեն Ասորեստանի հետ,
Ու իւղ կը տանին Եգիպտոս:
- 3 Տէրը Յուդայի հետ ալ վէճ ունի.
Յակոբը անոր ճամբաներուն համեմատ պիտի ^uպատժէ,
Եւ անոր արարքներուն համեմատ պիտի հատուցանէ իրեն:
- 4 Ան ^pարգանդին մէջ իր եղբօր կրունկէն բռնեց,
Եւ իր կորովով Աստուծոյ հետ ըմբշամարտեցաւ:
- 5 Հրեշտակին հետ ըմբշամարտեցաւ ու յաղթեց,
Լացաւ եւ անոր աղաչեց:
Բեթէլի մէջ ^qԱստուծոյ հանդիպեցաւ,
Եւ ան հոն խօսեցաւ մեզի հետ,
- 6 Այսինքն Տէրը՝ զօրքերու Աստուածը,
Որուն ^rանունը Եհովա է:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՅԼ ԽՕՍԷՐ

- 7 Ուրեմն վերադարձի՛ր քու Աստուծոյդ,
Պահէ՛ կարեկցութիւնն ու իրաւունքը,

^h Եբր.՝ ծովէն

^l Եբր.՝ դողան

^u Եբր.՝ հատուցանէ

^p Եբր.՝ փորին

^q Եբր.՝ անոր

^r Եբր.՝ յիշատակը

Եւ շարունակ յուսա քու Աստուծոյդ:

- 8 **Եփրեմ**^Ե վաճառական է, անոր ձեռքը խաբէութեան կշիռք կայ. Ան հարստահարելը կը սիրէ:
- 9 Եփրեմ ըսաւ. «Ի՛րապէս հարստացայ, Ինծի ինչք ճարեցի. Իմ բոլոր վաստակներուս համար Անօրէնութիւն պիտի չգտնեն իմ վրաս՝ որ մեղք ըլլայ»:
- 10 Իսկ ես Եգիպտոսի երկրէն ի վեր քու Տէր Աստուածդ եմ. Զեզ տակաւին վրաններու մէջ պիտի բնակեցնեմ՝ հանդիսաւոր տօնի օրերուն պէս:
- 11 Մարգարէներուն **միջոցով** խօսեցայ, Տեսիլքները բազմապատկեցի, Եւ մարգարէներուն՝ միջոցով՝ էառակներ գործածեցի՝:
- 12 Եթէ Գաղաադ ունայն է, իրենք անտարակոյս սնոտի են. Գաղգաղայի մէջ արջառներ զոհեցին, Ուստի անոնց բազինները քարակոյտերու պէս պիտի ըլլան Արտերու ակօսներուն վրայ:
- 13 Յակոբ Սուրիայի դաշտավայրը փախաւ, Եւ Իսրայէլ կնոջ մը համար ծառայեց. Կնոջ մը համար հօտերու պահապան եղաւ:
- 14 Տէրը մարգարէով մը Իսրայէլը Եգիպտոսէն հանեց, Եւ ան մարգարէով մը պահպանուեցաւ:
- 15 Եփրեմ դառնութեամբ **Աստուած** գրգռեց. Հետեւաբար անոր արիւնը իր վրայ պիտի ձգէ, Ու Տէրը անոր նախատինքը իրեն պիտի հատուցանէ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՃԻՌԸ

13

Երբ Եփրեմ խօսէր, ահուդողի **կը մատնէր.**

Ան Իսրայէլի մէջ բարձրացաւ, Բայց Բահաղով յանցաւոր եղաւ, ու մեռաւ:

- 2 Հիմա վերստին կը մեղանջեն. Իրենց համար «ձուլածոյ կուռքեր» կը կերտեն իրենց արծաթով, Կուռքեր՝ իրենց՝ խելքին համեմատ, Որոնք բոլորը արհեստաւորի գործեր են: Անոնց համար կ'ըսեն. «Զոհ մատուցանող մարդիկը թող հորթերը համբուրեն»:
- 3 Հետեւաբար անոնք առտուան ամպին պէս պիտի ըլլան,

- ^Ե Եբր.՝ քանանացի վաճառական
- ^Գ Եբր.՝ ձեռքով
- ^Կ Եբր.՝ նմանցուցի
- ^Մ Եբր.՝ ձուլածոյ պատկերներ
- ^Բ Եբր.՝ հանճարին

ՈՎՍԷՒՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- Կանուխ **իջած** վաղանցիկ ցօղին պէս,
Կալէն մրրիկով քշուած մղեղին պէս,
Ու ծխնելոյզէն **ելած** ծուխին պէս:
- 4** Սակայն ես Եգիպտոսի երկրէն ի վեր քու Տէր Աստուածդ եմ.
Ինձմէ զատ **ուրիշ** ո՛չ մէկ Աստուած ^Գճանչցիր,
Զանի որ ինձմէ զատ **ուրիշ** Փրկիչ չկայ:
- 5** Ես քեզ անապատին մէջ ճանչցայ,
Չորուցամաք երկրի մը մէջ:
- 6** Անոնք իրենց արօտին համեմատ կշտացան.
Կշտացան, եւ իրենց սիրտը գոռոզացաւ:
Հետեւաբար զիս մոռցան:
- 7** Ուստի անոնց ^Դմռնչող **առիւծի**^Ե պէս պիտի ըլլամ,
Ճամբային քով՝ ինձի պէս պիտի ^Եդարանիմ:
- 8** **Իր ձագերէն** զրկուած արջի պէս ^Գանոնց վրայ պիտի յարձակիմ՝.
Անոնց սիրտին պատեանը պիտի պատռեմ.
Զանոնք հոն պիտի լափեմ՝ մատակ առիւծի պէս.
Զանոնք դաշտի գազանները պիտի պատահեն:
- 9** Դո՛ւն քեզ կործանեցիր, ո՛վ Իսրայէլ.
Միայն ինձմէ է քու օգնութիւնդ:
- 10** Ո՞ր է այժմ քու թագաւորդ,
Որ քեզ ազատէ բոլոր քաղաքներուդ մէջ.
Ո՞ր են քու դատաւորներդ, որոնց մասին ըսիր.
«Ինձի թագաւոր եւ իշխանաւորներ տուր»:
- 11** Իմ բարկութեամբս քեզի թագաւոր տուի,
Ու ցասումովս **զայն են** առի:
- 12** Եփրեմի անօրէնութիւնը փաթթուած է,
Անոր մեղքը պահեստի **դրուած** է.
- 13** Անոր վրայ ծննդաբերող **կնոջ** երկունքի ցաւերը պիտի հասնին:
Ան իմաստուն որդի չէ,
Թէ ոչ ^Եարգանդին բերանը՝ **ա՛յնչափ** ատեն չէր կենար:
- 14** Զանոնք ^Ըդժոխքին ^Քզօրութենէն պիտի փրկեմ,
Զանոնք մահէն պիտի ազատեմ:
Ո՛վ մահ, ո՞ր է ժանտախտդ.
Ո՛վ դժոխք, ո՞ր է ակերումդ:

^Գ Կամ՝ ճանչցար

^Դ Կամ՝ վագրի

^Ե Եբր.՝ հսկեմ

^Գ Եբր.՝ զանոնք պիտի դիմաւորեմ

^Ե Եբր.՝ կոտրելու տեղը

^Ը Այսինքն՝ մեռած անձերու կայանին

^Ք Եբր.՝ ձեռքէն

ՈՎՍԷԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Իմ աչքերէս ^ժզղջումը պիտի ծածկուի:

- 15 Թէեւ ան **իր** եղբայրներուն մէջ պտղաբեր ըլլայ,
Արեւելեան հովը պիտի գայ,
Անապատէն Տէրոջ հովը պիտի բարձրանայ,
Եւ անոր աղբիւրը պիտի ցամքեցնէ,
Անոր աղբերակը պիտի չորցնէ:
Անոր բոլոր ցանկալի իրերուն գանձարանը պիտի կողոպտուի:
- 16 Սամարիա պիտի ակերուի,
Քանի որ իր Աստուծոյն դէմ ընդվզեցաւ.
Անոնք սուրով պիտի իյնան,
Անոնց երախաները գետին պիտի գարնուին,
Ու յղի կիները պիտի ճեղքուին:

ՈՎՍԷԷԻ ԱՂԵՐՍԸ ԻՍՐԱՅԷԼԻ

14

Ո՛վ Իսրայէլ, վերադարձի՛ր Տէրոջ՝ քու Աստուծոյդ,
Որովհետեւ քու անօրէնութեանդ պատճառով գայթեցար:

- 2 Խօսքե՛ր առէք ձեզի հետ ու Տէրոջ՝ վերադարձէք.
Ըսէ՛ք անոր. «Ներէ՛ բոլոր անօրէնութիւնները,
Եւ բարութեամբ ընդունէ **մեզ**,
Ու մեր շրթունքներուն [՞]զոհերը պիտի ^բմատուցանենք **քեզի**:
- 3 Ասորեստանցիս մեզ պիտի չփրկէ.
Ձիերու վրայ պիտի չհեծնենք.
Անգամ մըն ալ մեր ձեռքերուն գործին պիտի չըսենք.
“Դուն մեր Աստուածն ես»,
Քանի որ քո՛ւ քովդ որբը գթութիւն կը գտնէ»:

ՏԷՐԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՆՈՐ ԿԵԱՆՔ

- 4 Անոնց ուխտադրժութիւնը պիտի բուժեմ,
Ջանոնք յօժարակամ պիտի սիրեմ,
Քանի որ իմ բարկութիւնս անոնցմէ հեռացաւ:
- 5 Յօղի պէս պիտի ըլլամ Իսրայէլի.
Ան շուշանի պէս պիտի ծաղկի,
Եւ իր արմատները Լիբանանի **մայրիներուն** պէս պիտի ^գարձակէ:
- 6 Անոր մատաղատունկերը պիտի տարածուին.
Ան ձիթենիին փառաւորութիւնը պիտի ունենայ,
Ու Լիբանանի բուրմունքը:

^ժ Կամ՝ արգահատանքը

[՞] Եբբ.՝ զուարակները

^բ Եբբ.՝ հատուցանենք

^գ Եբբ.՝ զարնէ

ՈՎՍԷՒՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- 7 ⁷Անոր հովանիին տակ բնակողները պիտի վերադառնան՝,
⁸Յորենի պէս պիտի վերակենդանանան՝,
Եւ որթատունկի պէս պիտի բողբոջին.
Անոնք Լիբանանի գինիին համբաւը պիտի ունենան:
- 8 Եփրեմ **պիտի ըսէ.** «Ա՛լ ի՞նչ գործ ունիմ կուռքերուն հետ»:
Ես ալ պիտի պատասխանեմ եւ անոր վրայ հսկեմ.
Ես կանաչ եղելինի պէս եմ,
Քու պտուղդ ինձմէ կը ⁹հայթայթուի:
- 9 Ո՞վ է իմաստուն՝ որ ասոնք հասկնայ,
Կամ խելացի՝ որ ասոնք գիտնայ.
Որովհետեւ Տէրոջ ճամբաները ուղիղ են,
Արդարները անոնց մէջ պիտի քալեն,
Բայց յանցաւորները անոնց մէջ պիտի գայթին:

⁷ **Կամ**՝ Անոնք վերադառնալով պիտի նստին անոր հովանիին տակ

⁸ **Կամ**՝ Յորենը պիտի վերակենդանացնեն

⁹ **Եբր.**՝ գտնուի